Հավելված N 3
ՀՀ կառավարության 2025 թվականի
նոյեմբերի 27-ի N 1710-Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՏԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ

1. Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն) և նոտարները կատարողական վարույթի շրջանակներում փոխանակում են տեղեկատվություն, որը ներառում է մահացած անձանց մասնակցությամբ կատարողական վարույթների, վերջիններիս չկատարված պարտավորությունների, կատարողական վարույթի մահացած մասնակիցների ժառանգության ընդունման, ժառանգությունն ընդունած, այդ թվում՝ ժառանգության իրավունքի վկայագիր ստացած ժառանգների, մահացած պարտապանի ժառանգության վկայագրի բովանդակության (ժառանգական գույքի), պարտապանին տրված ժառանգության իրավունքի վկայագրերի մասին տեղեկությունները:

2. Հարկադիր կատարողը 1-ին կետում նշված տեղեկատվությունը ստանալու համար կատարում է հարցում՝ տեղեկատվական համակարգում մուտքագրելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն, հայրանուն, իրավաբանական անձի անվանում, կազմակերպաիրավական ձև.

2) հանրային ծառայությունների համարանիշ (առկայության դեպքում) կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի պետական գրանցման համար.

3) քաղաքացի/ոչ քաղաքացի (ոչ քաղաքացի լինելու դեպքում ծննդյան օր, ամիս, ամսաթիվ).

4) հարկադիր կատարման ենթակա ակտի համար.

5) կատարողական վարույթի կոդ.

6) մահվան փաստը հաստատող փաստաթղթի տվյալները՝ առկայության դեպքում:

3. Կատարված հարցմանն ի պատասխան ծառայությունը տեղեկատվական համակարգի միջոցով ստանում է հետևյալ տվյալները՝

1) կատարողական վարույթի մահացած մասնակիցների ժառանգության ընդունման վերաբերյալ դիմումի մասին.

2) ժառանգությունն ընդունած, այդ թվում՝ ժառանգության իրավունքի վկայագիր ստացած ժառանգների անուն, ազգանուն, հայրանուն (առկայության դեպքում), հանրային ծառայությունների համարանիշ (առկայության դեպքում) կամ անձնագրի տվյալներ, ծննդյան օր, ամիս, ամսաթիվ (առկայության դեպքում).

3) մահացած պարտապանի ժառանգության վկայագրի բովանդակության (ժառանգական գույքի) մասին.

4) պարտապանին տրված ժառանգության իրավունքի վկայագրի և դրա բովանդակության մասին:

4. Նոտարը ժառանգություն ձևակերպելիս կամ ժառանգատուի պարտքերի մասին տվյալներ ստանալու համար կարող է հարցում անել ծառայություն մահացած անձանց մասնակցությամբ կատարողական վարույթների, վերջիններիս չկատարված պարտավորությունների վերաբերյալ՝ ուղարկելով հետևյալ տվյալները՝

1) անուն, ազգանուն, հայրանուն, կազմակերպաիրավական ձև.

2) հանրային ծառայությունների համարանիշ (առկայության դեպքում) կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալներ, իրավաբանական անձի պետական գրանցման համար.

3) քաղաքացի/ոչ քաղաքացի (ոչ քաղաքացի լինելու դեպքում ծննդյան օր, ամիս, ամսաթիվ):

5. Կատարված հարցմանն ի պատասխան նոտարը տեղեկատվական համակարգի միջոցով սեղմ ժամկետում ստանում է հետևյալ տվյալները՝

1) կատարողական վարույթի հարուցման հիմք հանդիսացած կատարման ենթակա ակտի մասին տվյալները.

2) կատարողական վարույթի հարուցման, կասեցման, ավարտման, վերսկսման, կարճման, այդ որոշումների իրավական հիմքերի և ամսաթվերի վերաբերյալ տվյալները.

3) պահանջատիրոջ և պարտապանի անունները (անվանումները).

4) հարկադիր կատարման ենթակա պարտավորության վերաբերյալ տեղեկություններ:

6. Նոտարը «Նոտարիատի մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով ներկայացնում է հարկադիր կատարման դիմում (էլեկտրոնային հաղորդագրություն)՝

1) գումարի բռնագանձման պահանջով իր արձակած կարգադրության հարկադիր կատարման համար.

2) մակագրության թերթի հարկադիր կատարման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ